ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3998-Ա «18» հոկտեմբերի 2024թ.

ԱՎԱՆ, ԹՈՒՄԱՆՅԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ Հ.7/1 ՇԵՆՔԻ Հ.2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՄԻ ՀԱՏՎԱԾԻ (33.3ՔՄ) ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Հռիփսիմե Մանուկյանի և Աշոտ Կարապետյանի լ/ա Հռիփսիմե Մանուկյանի դիմումը՝ Ավան, Թումանյան թաղամասի հ.7/1 շենքի, ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով Աշոտ Կարապետյանին և Հռիփսիմե Մանուկյանին պատկանող հ.2 բնակարանի մի հատվածի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 29.07.2020թ. հ.29072020-01-0237 վկայական) գործառական նշանակությունը հասարակական սահմանելու մասին:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի հ.88 որոշման հ.1 հավելվածի 7-րդ կետով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 08.10.2024թ. հ.Դ-115125-24 եզրակացությունը, ինչպես նաև «Արամ Աջաբխանյան» ԱՁ-ի (որակավորում ունեցող անձ Ջուլիետտա Մկրտչյան, վկայական №0360) կողմից 07.09.2024 թվականին տրված շինությունների հատակագիծը.

1.Ավան, Թումանյան թաղամասի հ.7/1 շենքի, ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով Հռիփսիմե Մանուկյանին և Աշոտ Կարապետյանին պատկանող հ.2 բնակարանի մի հատվածի (ըստ 07.09.2024թ. շինությունների հատակագծի հ.1,2,3,4 տարածքները, ընդհանուր՝ 33.3քմ) գործառական նշանակությունն, առանց ճարտարապետահատակագծային առաջադրանքի և նախագծային փոփոխությունների, սահմանել որպես հասարակական և ընդգրկել ոչ բնակելի ֆոնդում՝ «ՀՀՇՆ 31-01-2014» պահանջներին չհակասելու պայմանով:

2.Հանձնարարել Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի ղեկավարին՝ սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքը հաշվառել որպես հասարակական:

3.Ընդունել ի գիտություն, որ սույն որոշմամբ սահմանված անշարժ գույքի գործառական նշանակության փոփոխությունը ենթակա է պետական գրանցման՝ ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում այն ստանալու հաջորդ օրը:

5.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով ՀՀ վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

6.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունների պետերի և Ավան վարչական շրջանի ղեկավարի վրա:

7. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ